ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 15
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան **14-ը հունվարի 2026թ.**

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրեն Ա. Միրզախանյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1910-Ն որոշման Հավելված N5-ի Աղյուսակ N7-ը՝ հարկային և մաքսային ծառայողների ուսուցման և վերապատրաստման ծառայություններ կատարելու նպատակով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 12-ի «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2026թ-ի տարեկան ուսումնական և վերապատրաստման ծրագրերը հաստատելու մասին» №18-Ա հրամանով հաստատված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1910-Ն որոշմամբ նախատեսված **175,470,500.00 (մեկ հարյուր յոթանասունհինգ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ Պետական մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.2. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.5. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.6. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Պետական մարմինը մոնիթորինգն իրականացնում է Կազմակերպության կողմից յուրաքանչյուր եռամսյակ, բայց ոչ ուշ քան հաջորդող ամսվա 10-ը ներկայացված դասընթացների քանակի, դասընթացների անվանումների, թիրախային խմբերի, անցկացման ժամանակահատվածի, ժամաքանակների և մասնակիցների թվաքանակների վերաբերյալ տեղեկատվության համադրմամբ (ՀՀ ՊԵԿ նախագահի հրամանների և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության հետ):

3.4. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.5. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում ուսումնասիրել Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

3.6. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հետևյալ բաշխվածությամբ՝

հազ. դրամ

Ծախսային հոդված	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ընթացիկ ծախսեր	**43,867.7**	**105,282.4**	**131,603.0**	**175,470.5**

Ընդ որում՝ յուրաքանչյուր ամսվա համար վճարումը կատարվում է մինչև տվյալ ամսվա 20-ը:

ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N1910-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ընդունվելուց հետո ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) պետք է վերադարձնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է իրականացնել փոխհատուցում Պետական մարմնին չիրականացված միջոցառման չափով: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, համաճարակը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված

պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 12-ի «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2026թ-ի տարեկան ուսումնական և վերապատրաստման ծրագրերը հաստատելու մասին» №18-Ա հաստատված ծրագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի միջև, որոնք ուժի մեջ են մտնում դրանցում նախատեսված ժամկետներում և կարգով:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ք.Երևան, Մ. Խորենացու 7 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011054062 ՀՎՀՀ 02647057 ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է. Գևորգյան --- ստորագրություն	ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ Ք.Երևան, Ահարոնյան 12/3 Երևանի թիվ 1 ՏԳԲ Հ/Հ 900018002585 ՀՎՀՀ 00107399 ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Միրզախանյան --- ստորագրություն

Հավելված 1
2026թ. հունվարի 14-ին կնքված
«Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 15 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետ	Պահանջվող գումար հազար դրամ
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 12-ի «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2026թ-ի տարեկան ուսումնական և վերապատրաստման ծրագրերը հաստատելու մասին» №18-Ա հաստատված ծրագիր	Հարկային և մաքսային ծառայողի պատրաստման, Հարկային և մաքսային օրենսդրության դրույթների փոփոխության և կիրառման ընթացակարգերի, «Հարկատու3» և այլ ծրագրերի, հաշվապահական հաշվառման, մաքսային հսկողության և վարչարարության, օտար լեզուների, կրիպտոարժույթների, արհեստական բանականության և այլ թեմաներով ուսուցման և վերապատրաստման աշխատանքներ	Հարկային և մաքսային մարմինների ծառայողների վերապատրաստման, վերարակավորման, մասնագիտական որակավորման բարձրացման, հատուկ ուսուցման և տեղեկատվական-վերլուծական նյութեր պատրաստելու և տպագրելու ծառայություններ	ՀՀ ՊԵԿ նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 21-ի № 1351-Ա և ՀՀ ՊԵԿ նախագահի 2023 թվականի ապրիլի 26-ի № 401-Լ հրամաններով սահմանված ընթացակարգերին համապատասխան ապահովել նվազագույնը թվով 2300 (երկու հազար երեք հարյուր) ունկնդիրների ուսուցում՝ նվազագույնը 2300 (երկու հազար երեք հարյուր) ակադեմիական ժամ տևողությամբ (որից 800ակ/ժամ դասընթացը նախատեսված է հարկ վճարողների համար) և ապահովել «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 19.1-ին և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածների համաձայն ՀՀ ՊԵԿ Անձնակազմի կառավարման վարչության կողմից ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ներկայացված վերապատրաստման ենթակա ծառայողների վերապատրաստումը:	29.12.2026թ	175,470.5
					ԸՆԴԱՄԵՆԸ	175,470.5